

**ԾՐԱԳԻՐ**

**ՀՀ ՄԱՐԶԵՐՈՒՄ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՇԽԱՏՈՂ ԲԺԻՇԿՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
 «ԼԱԲՈՐԱՏՈՐ ԱԽՏՈՐՈՇՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ 4-ՇԱՐԱԹՅԱ ԴԱՍԸՆԹԱՑԻ**

Օգոստոս 2020թ. – օգոստոս 2022թ. , ք. Երևան  
 (Մուրացան» հիվանդանոցային համալիր, «Բլադ Սելս» լաբորատորիա)

Հայ օգնության ֆոնդ

| Թեմա                                                                                                                                                                                                                               | Նկարագիր                                                                                                                                                                                                                                                                                                                                 | Տևողություն<br>(յուր. օր 6 ժամ,<br>1 ժամ՝ 60ր.)                           | Պատասխանատու                                                                                               | Ակնկալվող արդյունք                                                                                                                                                                                                                                                                                                    |
|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---------------------------------------------------------------------------|------------------------------------------------------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| 1. Լաբորատոր ախտորոշման մեթոդները, ժամանակակից սարքավորումները<br><br>2. Արյունաքանական հետազոտություններ, տեսություն և պրակտիկա: Արյան ընդհանուր հետազոտություն (հեմոգլոբինի որոշում, էրիթրոցիտների, թրոմբոցիտների, լեյկոցիտների, | <ul style="list-style-type: none"> <li>• Հիվանդների քննարկում</li> <li>• Մասնակցություն հետազոտական միջոցառումների</li> <li>• Տեսական հարցերի քննարկում</li> </ul><br><ul style="list-style-type: none"> <li>• Հիվանդների քննարկում</li> <li>• Մասնակցություն հետազոտական միջոցառումների</li> <li>• Տեսական հարցերի քննարկում</li> </ul> | 6 ժամ<br>09:00-15:00<br><br><br><br><br><br><br><br>18 ժամ<br>09:00-15:00 | Զարուհի Գևորգյան<br>Արաքսյա Գրիգորյան<br><br><br><br><br><br><br><br>Զարուհի Գևորգյան<br>Արաքսյա Գրիգորյան | Դասընթացի ավարտին մասնակիցները կկարողանան. <ul style="list-style-type: none"> <li>• Պատրաստել պրեպարատը մանրադիտակային զննման, կենսամատերիալը՝ բիոքիմիական, իմունոլոգիական և այլ հետազոտությունների համար</li> <li>• Նախապատրաստել լաբորատոր հետազոտությունների համար անհրաժեշտ ռեագենտները, ներկանյութերը</li> </ul> |

|                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                          |                                                                                                                                                                                                                                                                                                                                          |                                                                |                                                                                                |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                 |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----------------------------------------------------------------|------------------------------------------------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| <p>ռետիկուլոցիտների հաշվարկ, (լեյկոֆորմուլա) նորմայում և լեյկոզների ու անեմիաների ժամանակ: Հետազոտության նշանակման ցուցումները: Ժամանակակից հեմատոլոգիական անալիզատորներ, աշխատանքի սկզբունքը, ստացված պատասխանների վերլուծությունը</p> <p>3. Ընդհանուր կլինիկական հետազոտությունների տեսություն և պրակտիկա, մեզի ընդհանուր հետազոտություն, կանանց և տղամարդկանց քսուկների հետազոտություն: Ժամանակակից անալիզատորներ, աշխատանքի սկզբունքը, ստացված պատասխանների վերլուծությունը</p> <p>4. Բիոքիմիական հետազոտություններ, արյան շիճուկում ֆերմենտների հայտնաբերում (ամիլազա, AST, ALT, KFK-MB), գլյուկոզայի որոշում, միզանյութի և կրեատինինի որոշում, լյարդի ֆունկցիայի հետազոտություն, ճարպային փոխանակության հետազոտություն (խոլեստերին, եռգլիցերիդներ, լիպոպրոտեիններ): Էլեկտրոլիտներ: Ժամանակակից</p> | <ul style="list-style-type: none"> <li>• Հիվանդների քննարկում</li> <li>• Մասնակցություն հետազոտական միջոցառումների</li> <li>• Տեսական հարցերի քննարկում</li> </ul><br><ul style="list-style-type: none"> <li>• Հիվանդների քննարկում</li> <li>• Մասնակցություն հետազոտական միջոցառումների</li> <li>• Տեսական հարցերի քննարկում</li> </ul> | <p>18 ժամ<br/>09:00-15:00</p><br><p>18 ժամ<br/>09:00-15:00</p> | <p>Զարուհի Գևորգյան<br/>Արաքսյա Գրիգորյան</p><br><p>Զարուհի Գևորգյան<br/>Արաքսյա Գրիգորյան</p> | <ul style="list-style-type: none"> <li>• Աշխատել ժամանակակից լաբորատոր սարքավորումներով/ անալիզատորներով</li> <li>• Իրականացնել լաբորատոր հետազոտությունը՝ ընդունված սանիտարա-հիգիենիկ կանոններին համապատասխան</li> <li>• Սկրինինգների, ինչպես նաև համաճարակների և այլ անհետաձգելի իրավիճակների ժամանակ իրականացնել էքսպրես մեթոդներով հետազոտություններ</li> <li>• Ընդունված կարգով հիվանդին տրամադրել հետազոտության պատասխանը</li> <li>• Իրականացնել որակի ներքին վերահսկողություն</li> </ul> |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----------------------------------------------------------------|------------------------------------------------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|

|                                                                                                                                                                                                                                  |                                                                                                                                                                    |                               |                                               |  |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------------------|-----------------------------------------------|--|
| <p>բիռքիմիական անալիզատորներ, աշխատանքի սկզբունքը, ստացված պատասխանների վերլուծությունը</p>                                                                                                                                      |                                                                                                                                                                    |                               |                                               |  |
| <p>5. Մակարդելիության համակարգի հետազոտություն: Ժամանակակից կոագուլոմետրեր, աշխատանքի սկզբունքը, ստացված պատասխանների վերլուծությունը</p>                                                                                        | <ul style="list-style-type: none"> <li>• Հիվանդների քննարկում</li> <li>• Մասնակցություն հետազոտական միջոցառումների</li> <li>• Տեսական հարցերի քննարկում</li> </ul> | <p>6 ժամ<br/>09:00-15:00</p>  | <p>Զարուհի Գևորգյան<br/>Արաքսյա Գրիգորյան</p> |  |
| <p>6. Իմունոլոգիական հետազոտություններ: Արյան շիճուկում անտիգենների և հակամարմինների որոշում, հորմոնների քանակի որոշում: Ժամանակակից իմունոլոգիական անալիզատորներ, աշխատանքի սկզբունքը, ստացված պատասխանների վերլուծությունը</p> | <ul style="list-style-type: none"> <li>• Հիվանդների քննարկում</li> <li>• Մասնակցություն հետազոտական միջոցառումների</li> <li>• Տեսական հարցերի քննարկում</li> </ul> | <p>18 ժամ<br/>09:00-15:00</p> | <p>Զարուհի Գևորգյան<br/>Արաքսյա Գրիգորյան</p> |  |
| <p>7. Բջջաբանական հետազոտություններ: Պրեպարատների պատրաստումը, ներկումը, մանրադիտակային զննումը</p>                                                                                                                              | <ul style="list-style-type: none"> <li>• Հիվանդների քննարկում</li> <li>• Մասնակցություն հետազոտական միջոցառումների</li> <li>• Տեսական հարցերի քննարկում</li> </ul> | <p>6 ժամ<br/>09:00-15:00</p>  | <p>Զարուհի Գևորգյան<br/>Արաքսյա Գրիգորյան</p> |  |
|                                                                                                                                                                                                                                  | <ul style="list-style-type: none"> <li>• Հիվանդների քննարկում</li> </ul>                                                                                           | <p>6 ժամ<br/>09:00-15:00</p>  | <p>Զարուհի Գևորգյան<br/>Արաքսյա Գրիգորյան</p> |  |

|                                                                                                                                                                         |                                                                                                                                                                                                                                                                                                                                 |                              |                                                                                                                                       |  |
|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------------------------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--|
| <p>8. Մանրէաբանական հետազոտություններ: Մանրէաբանական միջավայրեր: Ժամանակակից մանրէաբանական անալիզատորներ, աշխատանքի սկզբունքը, ստացված պատասխանների վերլուծությունը</p> | <ul style="list-style-type: none"> <li>• Մասնակցություն հետազոտական միջոցառումների</li> <li>• Տեսական հարցերի քննարկում</li> </ul>                                                                                                                                                                                              | <p>6 ժամ<br/>09:00-15:00</p> | <p>Զարուհի Գևորգյան<br/>Արաքսյա Գրիգորյան</p>                                                                                         |  |
| <p>9. Արագ ախտորոշման թեստեր, կիրառության ցուցումները, զգայունության և սպեցիֆիկության ցուցանիշները</p>                                                                  | <ul style="list-style-type: none"> <li>• Հիվանդների քննարկում</li> <li>• Մասնակցություն հետազոտական և բուժական միջոցառումների</li> <li>• Տեսական հարցերի քննարկում</li> </ul>                                                                                                                                                   | <p>12 ժամ</p>                | <p>Աննա Շիրինյան</p>                                                                                                                  |  |
| <p>Այցելություն Հանրապետական գիտաբժշկական գրադարան (ՀԳԲԳ)</p>                                                                                                           | <p>Ժամանակակից բժշկական գրականության և ամսագրերի ընթերցում</p>                                                                                                                                                                                                                                                                  | <p>6 ժամ</p>                 | <p>Մանե Խաչատրյան,<br/>Ռուբեն Հովհաննիսյան,<br/>Վիլելտա Զովունյան,<br/>Նարինե Մովսիսյան,<br/>Արմինե Հակոբյան,<br/>Երվանդ Հակոբյան</p> |  |
| <p>Դասախոսություններ ՀԳԲԳ-ում</p>                                                                                                                                       | <ul style="list-style-type: none"> <li>• Բժշկական տեղեկատվության որոնումը համացանցում</li> <li>• Ապացուցողական բժշկություն</li> <li>• Բժշկություն և իրավունք</li> <li>• Ամոքիչ բժշկություն</li> <li>• Ալերգոլոգիա/ալերգիկ այտուցի համախտանիշ/</li> <li>• Արյունաբանություն/արյունաբանություն ոչ արյունաբանների համար</li> </ul> |                              |                                                                                                                                       |  |

|                                                                                                                 |                                                                                                                           |                                  |                                                  |  |
|-----------------------------------------------------------------------------------------------------------------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------|----------------------------------|--------------------------------------------------|--|
| <p>Համակարգչային գրագիտության դասընթացներ<sup>1</sup> ՀԳԲԳ-ում</p> <p>ՇՄՁ արդյունքների ամփոփում<sup>2</sup></p> | <p>MS Word, MS Excel, MS PowerPoint ծրագրեր և համացանց</p> <p>Կլինիկական մեկ դեպքի, մեկ հոդվածի (ռեֆերատ) ներկայացում</p> | <p>24 ժամ</p> <p>10:00-12:00</p> | <p>Մանե Խաչատրյան</p> <p>Համբարձում Սիմոնյան</p> |  |
|-----------------------------------------------------------------------------------------------------------------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------|----------------------------------|--------------------------------------------------|--|

<sup>1</sup>Ընտրովի է և ներառված չէ 120 ժամի մեջ:

<sup>2</sup>Որպես ծրագրի բաղկացուցիչ մաս՝ մասնակիցները պետք է ներկայացնեն կլինիկական դեպքի նկարագրություն և ռեֆերատ: Այս հանձնարարությունն իրագործելու համար մասնակիցները կարող են օգտվել Հանրապետական գիտաբժշկական գրադարանի ռեսուրսներից (տպիչներ, համակարգիչներ, համացանց), որոնք ապահովվել են ՀՕՖ-ի կողմից:

**Ընդհանուր նկարագիր** – ՀՀ մարզերից և ԼՂՀ-ից Երևանում վերապատրաստվող բժիշկներն իրենց վերապատրաստման ղեկավարներին ուղեկցում են համայցերի ժամանակ, ինչպես նաև աջակցում են նրանց հիվանդների վարման ընթացքում՝ ներառյալ վիրահատություններն ու պրոցեդուրաներ: Վերապատրաստվող բժիշկները սովորում են նոր մեթոդներ, ծանոթանում նոր տեխնոլոգիաների և գործիքների կիրառմանը, մասնակցում իրենց ոլորտի ամենաթարմ նորամուծությունները ներկայացնող դասախոսությունների և դասընթացների:

Յուրաքանչյուր օրվա ընթացքում նախատեսված է 1 ժամ ընդմիջում, որը ներառված չէ (09:00-15:00) 6 ժամվա մեջ

**Վերապատրաստման պատասխանատուներ՝** Զարուհի Գևորգյան, Արաքսյա Գրիգորյան

Թիրախային լսարան՝ բժիշկ-լաբորանտներ:  
 Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 3-4 հոգի: